Շաբաթական ակնարկ 21.07.2025

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

Նախորդ շաբաթ ԱՄՆ բոլոր հիմնական ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն, բացառությամբ Dow Jones-ի:



Տեխնոլոգիական ETF-ների բաժինը շուկայի ընդհանուր կառավարման տակ գտնվող ակտիվներում (AUM) կազմում է ռեկորդային 42%:



Նախորդ շաբաթ Ethereum-ը գերազանցեց 3600 դոլարի մակարդակը:

Նախորդ շաբաթվա ընթացքում ԱՄՆ պարտատոմսերի շուկան արձանագրեց խառը արդյունքներ:



Նախորդ շաբաթվա ընթացքում S&P 500-ը աճեց 0.64 % -ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Nasdaq-ը աճեց 1.27 %-ով



Նախորդ շաբաթվա ընթացքում Dow Jones-ը նվազեց 0.03 %-ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Russell 2000-ը աճեց 0.28 %-ով

Ինդեքսներ

Հիմնական բաժնետոմսային ինդեքսների դինամիկան նախորդ շաբաթ

- Նախորդ շաբաթ ԱՄՆ բոլոր հիմնական ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն, բացառությամբ Dow Jones-ի:
- Բաժնետոմսերի շուկան ուրբաթ օրը որոշակի անկում ապրեցին, այն բանից հետո, երբ Թրամփը հայտարարեց ԵՄ-ի դեմ մաքսատուրքերի նոր ծրագրի մասին:
- Նորությունները տարածվեցին հետևյալ վերնագրի տակ «Թրամփը պնդում է, որ ԵՄ-ից ներմուծվող բոլոր ապրանքների համար պետք է կիրառվի առնվազն 15%-20% մաքսատուրք»:



Mag7 ազմբյուղի եկամտաբերությունը զգալիորեն գերազանցեց S&P S&P500-ի կատարողականին:

Այժմ Թրամփի երկրորդ նախագահման ժամանակահատվածում S&P 500-ի եկամտաբերությունը գերազանցում է առաջին նախագահման ժամանակահատվածում արձանագրած դինամիկային:

Բաժնետոմսերի շուկա| 2-րդ եռամսյակի հաշվետվություններ

Taiwan Semiconductor Manufacturing-ը (TSM) հայտնեց, որ երկրորդ եռամսյակի EPS-ը կազմել է 15.36 NT դոլար (≈ 2.47 ԱՄՆ դոլար), ինչը տարեկան 60.7%-ով ավելի է, քան նախորդ տարի և գերազանցեց վերլուծաբանների սպասումները: Ընկերության հասույթը կազմել է 933.79 միլիարդ NT դոլար (≈ 30.07 միլիարդ ԱՄՆ դոլար), որը նախորդ տարվա համեմատ բարձր է 38.6%-ով և ավելին է, քան կանխատեսում էին վերլուծաբանները: Ընկերությունը բարձրացրել է տարեկան եկամտի աճի կանխատեսումը մոտ 30%-ով: Նախորդ շաբաթ ընկերության բաժնետոմսերը աճեցին մոտ 4.3%-ով:

JPMorgan Chase-ը (JPM) գերազանցեց սպասվող EPS-ը 17%-ով, իսկ հասույթը գերազանցեց 3.6%-ով կազմելով 45.68 միլիարդ դոլար, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մեծ է 2.6%-ով: Նույնիսկ 774 միլիոն դոլարի եկամտահարկի արտոնությունից հրաժարվելուց հետո մեկ բաժնետոմսի համար շահույթը աճել է 28 ցենտով: Նախորդ շաբաթ ընկերության բաժնետոմսերը աճեցին մոտ 1.5%-ով:



Բաժնետոմսերի շուկա| 2-րդ եռամսյակի հաշվետվություններ

Johnson & Johnson-ը (JNJ) հայտնեց, որ երկրորդ եռամսյակում մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 2.86 դոլար, ինչը նախորդ տարեկան համեմատ 7.9%-ով ավելի է և 4.8%-ով գերազանցում է կանխատեսումները: Ընկերության հասույթը կազմել է 25.5 միլիարդ դոլար, ինչը 6.4%-ով ավելի է նախորդ տարվա համեմատ և գերազանցում է սպասումները: Ընկերությունը բարձրացրել է տարեկան կանխատեսումը՝ հողում անելով դեղագործական և բժշկական տեխնոլոգիաների վաճառքի բարձր ցուցանիշներին: Հաշվետվությունից հետո ընկերության բաժնետոմսերը աճել են ավելի քան 4.3%-ով:

Netflix-ը (NFLX) գրանցեց 4.88 դոլարի շահույթ մեկ բաժնետոմսի դիմաց և գերազանցեց կանխատեսումները մոտ 1.5%-ով, իսկ տարեկան աճը կազմում է 16.4%: Ընկերության հասույթը կազմել է 9.64 միլիարդ դոլար, ինչը մի փոքր ցածր է սպասումներից, բայց տարեկան կտրվածքով գրանցել է 14% աճ: Չնայած 8 միլիոն նոր բաժանորդների ավելացմանը, ընկերությունը հաջորդ եռամսյակի համար հրապարակել է հասույթի ավելի մեղմ կանխատեսումներ: Արդյունքում ընկերության բաժնետոմսերը նվազել են 2.9%-ով:

Պարտատոմսերի շուկա

Նախորդ շաբաթվա ընթացքում ԱՄՆ պարտատոմսերի շուկան արձանագրեց խառը արդյունքներ, 2 և 5 տարեկան պարտատոմսերի եկամտաբերությունը աճեց (գները նվազեցին), իսկ 7, 10 և 30 տարեկան պարտատոմսերը արձանագրեց բացասական եկամտաբերություն (գները բարձրացան):

Պարտատոմսերի շուկա | դոլարի ինդեքս | տոկոսադրույքի ակնկալվող նվազեցում

Դոլարի ինդեքսը շաբաթն ավարտեց աճով՝ CPI/PPI հաշվետվությունների և Թրամփ-Փաուել մեկնաբանությունների ֆոնին տեղի ունեցած կտրուկ տատանումներից հետո:

«Լավ լուրը» «վատ լուր» էր տոկոսադրույքի իջեցման հույսերի համար, քանի որ 2025 թվականի սպասումները նվազեցին, սակայն 2026 թվականի սպասումները աճեցին:





Մարտ ամսին գրանցած բարձր մակարդակներից հետո բնական գազի գինը շարունակաբար նվազում է: Այնուամենայնիվ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գազի գինը բարձր է մոտ 60%-ով:

Նավթի գինը որոշակի աճից հետո նվազեց և շաբաթն ավարտեց անկմամբ, քանի որ առևտրով զբաղվողները սկսեցին անտարբեր լինել աշխարհաքաղաքական ռիսկերի նկատմամբ և վերագնահատեցին առաջարկի և պահանջարկի ապագա հավասարակշռությունը:



Ինչպես հաղորդում է Բրենդան Ֆագանը, տարիներ տևած սպեկուլյատիվ բումերից և գոյաբանական կարգավորիչ անորոշությունից հետո Վաշինգտոնը կրիպտոարժույթներին տվել է երկար սպասված լեգիտիմությունը: Ethereum-ը քաղում է այս իրողության օգուտները և հատել է 3600 դոլարի մակարդակը:

Bitcoin-ը նոր ռեկորդային բարձրակետերի հասնելուց հետո շաբաթն ավարտեց գրեթե անփոփոխ մակարդակում:



Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ բնակարանային շուկան շարունակում է թուլանալ: Հունիսին 50 խոշորագույն մետրոպոլիտենային տարածքների կեսում գրանցվել է տների գների տարեկան անկում: Տեխասի Օսթին քաղաքում և Ֆլորիդայի Տամպա քաղաքում գրանցվել է ամենակտրուկ անկումը՝ ավելի քան 5%, հաջորդում են Մայամին (Ֆլորիդա), Դալլասը (Տեխաս) և Ֆլորիդայի Օռլանդոն (Ֆլորիդա): Համեմատության համար, մայիսին և ապրիլին 50 խոշոր մետրոպոլիտենային տարածքներից 22-ում և 20-ում գրանցվել էր տների գների անկում: Նոյեմբերին ԱՄՆ 50 խոշորագույն մետրոպոլիտենային տարածքներից միայն 7-ում է գրանցվել տարեկան գների անկում:



Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ պետական պարտատոմսերում արտասահմանյան ներդրողների կապիտալը մայիսին աճել է 32.4 միլիարդ դոլարով՝ հասնելով 9.05 տրիլիոն դոլարի, որը երկրորդ ամենաբարձր ցուցանիշն է պատմության մեջ: Օտարերկրացիների մոտ է գտնվում ԱՄՆ պետական պարտատոմսերի շուկայի մոտ 31.7%-ը, որը ամենաբարձր մակարդակն է 2022 թվականի հունիսից ի վեր: Կանադայի ընդհանուր պահուստները հասցնել են ռեկորդային 430 միլիարդ դոլարի: Ճապոնիան ավելացրել է իր պահուստները մոտ 500 միլիոն դոլարով՝ հասնելով 1.14 տրիլիոն դոլարի, որը ամենաբարձր ցուցանիշն է 2024 թվականի մարտից ի վեր: Մեծ Բրիտանիայի մասնաբաժինը այժմ կազմում է ռեկորդային 809.4 միլիարդ դոլարի: Միևնույն ժամանակ, Չինաստանի պահուստները, որոնք երրորդ խոշորագույնն են, նվազել են 900 միլիոն դոլարով՝ հասնելով 756.3 միլիարդ դոլարի, որը ամենացածր ցուցանիշն է 2009 թվականի հունվարից ի վեր:

Հետաքրքիր փաստեր

Տեխնոլոգիական ոլորտում երբեք այսքան շատ գումար չի եղել: Տեխնոլոգիական ETF-ների բաժինը շուկայի ընդհանուր կառավարման տակ գտնվող ակտիվներում (AUM) այժմ կազմում է ռեկորդային 42%: Տեխնոլոգիական հատվածի բաժինը վերջին 5 տարիների ընթացքում կրկնապատկվել է: Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ ներդրողները վերջին 12 ամիսների ընթացքում այս ֆոնդերում ներդրել են մոտ 22 միլիարդ դոլար: Սա ենթադրում է, որ ներդրողների կողմից տեխնոլոգիական բաժնետոմսերում ներդրումները գտնվում են ռեկորդային բարձր մակարդակի վրա:



Հետաքրքիր փաստեր

10 տարի առաջ JPMorgan-ի շուկայական կապիտալիզացիան ավելի ցածր էր, քան Wells Fargo-ինը: Սակայն այսօր JPMorgan-ի շուկայական կապիտալիզացիան գերազանցում է 800 միլիարդ դոլարը, որը ավելին է, քան նրա 3 խոշորագույն մրցակիցների BofA-ի, Wells Fargo-ի և Citigroup-ի կապիտալիզացիան միասին վերցրած:

ԱՄՆ-ի տնտեսական օրացույց

Այս շաբաթվա ընթացքում 386 ընկերություններ պատրաստվում են հրապարակել իրենց 2025 թվականի երկրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները: Այս շաբաթ շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են՝ Alphabet (GOOG)-ի, Tesla, Inc. (TSLA)-ի, The Coca-Cola (KO)-ի, International Business Machines Corporation (IBM)-ի, Blackstone Inc. (BX)-ի և շատ ուրիշ ընկերությունների հաշվետվությունները:

#1 / 386 Total save as portfolio | create alert Refresh: 3min | off Page 1 / 20

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	Market Cap	P/E	Price	Change	Volume
1	GOOG	Alphabet Inc	Communication Services	Internet Content & Information	USA	2250.51B	20.74	185.94	0.67%	20,884,839
2	GOOGL	Alphabet Inc	Communication Services	Internet Content & Information	USA	2250.51B	20.64	185.06	0.81%	33,814,566
3	TSLA	Tesla Inc	Consumer Cyclical	Auto Manufacturers	USA	1060.32B	181.29	329.65	3.21%	93,822,128
4	SAP	Sap SE ADR	Technology	Software - Application	Germany	356.94B	58.73	305.97	-0.86%	1,021,160
5	KO	Coca-Cola Co	Consumer Defensive	Beverages - Non-Alcoholic	USA	300.65B	27.97	69.85	-1.05%	14,893,943
6	PM	Philip Morris International Inc	Consumer Defensive	Tobacco	USA	278.20B	36.73	178.73	-0.25%	4,649,764
7	IBM	International Business Machines Corp	Technology	Information Technology Services	USA	265.69B	49.17	285.87	1.37%	4,461,177
8	TMUS	T-Mobile US Inc	Communication Services	Telecom Services	USA	257.98B	22.15	227.21	0.08%	3,773,571
9	BX	Blackstone Inc	Financial	Asset Management	USA	204.70B	51.04	168.72	-2.19%	4,127,008
10	RTX	RTX Corp	Industrials	Aerospace & Defense	USA	202.40B	44.42	151.50	0.00%	5,921,355
11	NOW	ServiceNow Inc	Technology	Software - Application	USA	199.57B	130.78	963.40	0.44%	1,141,884
12	TXN	Texas Instruments Inc	Technology	Semiconductors	USA	196.79B	41.04	216.62	0.01%	4,535,464
13	T	AT&T, Inc	Communication Services	Telecom Services	USA	193.85B	16.54	26.94	-0.19%	27,309,175
14	ISRG	Intuitive Surgical Inc	Healthcare	Medical Instruments & Supplies	USA	185.88B	76.07	518.62	0.48%	1,892,892
15	VZ	Verizon Communications Inc	Communication Services	Telecom Services	USA	172.19B	9.70	40.84	-0.27%	20,978,884
16	GEV	GE Vernova Inc	Industrials	Specialty Industrial Machinery	USA	156.83B	82.00	574.60	0.78%	2,043,681
17	TMO	Thermo Fisher Scientific Inc	Healthcare	Diagnostics & Research	USA	156.57B	24.34	414.75	-2.41%	2,647,086
18	NEE	NextEra Energy Inc	Utilities	Utilities - Regulated Electric	USA	156.35B	28.40	75.95	1.02%	7,984,917
19	BSX	Boston Scientific Corp	Healthcare	Medical Devices	USA	153.33B	75.94	103.64	-0.97%	8,571,006
20	HON	Honeywell International Inc	Industrials	Conglomerates	USA	152.02B	27.17	236.54	-0.77%	3,613,554

Filters: earningsdate:thisweek export

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

TIME (ET)	REPORT	PERIOD	ACTUAL	MEDIAN FORECAST	PREVIOUS
**MONDAY, JULY 21 **					
10:00 am	U.S. leading economic indicators	June		-0.2%	-0.1%
TUESDAY, JULY 22					
8:30 am	Fed Chair Powell opening remarks at banking conference				
WEDNESDAY, JULY 23					
10:00 am	Existing home sales	June		4.0 million	4.03 million
THURSDAY, JULY 24					
8:30 am	Initial jobless claims	July 19		229,000	221,000
9:45 am	S&P flash U.S. services PMI	July		53.2	52.9
9:45 am	S&P flash U.S. manufacturing PMI	July		52.4	52.9
10:00 am	New home sales	June		650,000	623,000
FRIDAY, JULY 25					
8:30 am	Durable-goods orders	June		-11.0%	16.4%
8:30 am	Durable-goods minus transportation	June			0.5%

060 408 005, 060 408 002, 010 592 301
Երևան, Բուզանդ 87, 85 գրասենյակ
brokerage@araratbank.am